

ԲԱԺԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 ուղիարիոյ համար
 Տարեկան 10 Ֆր.
 Վեցամսեայ 5 »
 Արսասահմանի համար
 Տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 Անկերիկայի համար
 Տարեկան 2.50 ֆր.
 Վեցամսեայ 1.25 »
 ԿԱՆԻՅԻՎ ՎՃԱՐՆԵՐԻ
 Իրանուցեան տղոր առաջին
 երկուսին համար 40 անթրիլ
 հ. իսկ վերջին երեսին համար
 20 անթրիլ հ. երեքին
 առաջին անգամներու համար
 20 Օլո գեղջ կըլլայ :

ՇԱՐՇՈՒՄ

Նախկին և նորապիսի
 Խմբագրութեան հասցեին
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoun»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԻՒ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ԹՐԵՐԸ

Գրութիւնք ևս չեն տրուիր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

«ՇԱՐՇՈՒՄ» 1900Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
 Փետրուար 1ին կսկսի «Շար-
 ժում»-ի երրորդ տարեշրջանը հե-
 տեւեալ պայմաններով .
 Պուլիարիոյ համար տարեկան 12 Ֆր.
 » » վեցամսեայ 6 »
 Արսասահմանի համար տարեկան 15 »
 » » վեցամսեայ 8 »
 Անկերիկայի համար տարեկան 3 ֆր.
 » » վեցամսեայ 1.50 »
 Պուլիարիոյ համար ձեռք 15 անթրիլ
 Արսասահմանի » » 20 »
 Բաժնեգրիները կանխիկ են .
 Ամէն բաժանորդ իր հասցէին
 հետ մէկտեղ պէտք է բաժնե-
 գրինը գրկէ, ապա թէ ոչ «Շար-
 ժում» չի զրկուիր :
 Մեր գործակալներէն կը խնդ-
 րուի հազորդել մեզ՝ չը վճարող
 բաժանորդներուն անունները,
 որպէս զի այդ մարդոց թերթերը
 դադարեցնենք :

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԻՆԵՐՈՒՆ
 «Շարժում»-ի երկրորդ տարե-
 շրջանը աւարտելուն մէկ ամիս
 մնաց . մեր այն ամէն բաժանորդ-
 ները որոնք մինչեւ հիմա չեն
 վճարած . թող բարեհաճին զըր-
 կել իրենց բաժնեգրիները :
 Փետրուարի 1ին պիտի սկսի
 երրորդ տարեշրջանը . նախորդ
 տարուան պարտքերը չը վճարու-
 զին «Շարժում» չը պիտի զրկուի :
 Փետրուարին պիտի յայտարար-
 րուին նաեւ բոլոր այն բաժա-
 նորդներու և գործակալներու
 անունները, որոնք խիղճը ունին
 հայ թերթի մը վարձքը ուտելու :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ
 Աղարիա Մամճեան բնիկ Շա-
 պին-Գարահատուցի, 25 տարե-
 կան երիտասարդ մը, կարճահա-
 սակ, նրբակազմ և բարեձեւ որ
 4—5 տարի է որ այս կողմերը
 կը գտնուի եզեր . կը խնդրենք
 աչիւն ընթերցողներէն որ սոյն
 երիտասարդին վրայ, եթէ տե-
 զեկու թիւն մը ունին, հաճին
 խմբագրութեանս իմացնել :

ՄԻՆՉԵՒ ՎԵՐՉԸ ԹՈՒՐԻ

Բաժնի թղթակցութիւնից տե-
 զեկանում ենք որ Աշըգեան հայ
 եպիսկոպոսը, երբեմնի հայոց
 պատրիարքը, թուրքից խեղ-
 դված ու ճնշված հայերի հաւա-
 հատարմարարը, բռնակալ Սուլ-
 թանի բռնակալ կառավարու-
 թեան առաջ հայ ժողովրդի բռն-
 նաբարված իրաւունքները պաշտ-
 պանի պաշտօն և կոչում ունե-
 ցող իր գործունէութեան շըր-
 ջանի պատմութիւնը գրել է մին-
 չեւ իր կեանքի վերջին օրը
 և նրա մէջ մեղադրել հայ երի-
 տասարդութիւնը, Իզմիրլեանին
 և արդարացի իր տիրոջ—Սուլ-
 թանի համարին :

Ուրեմն Աշըգեան մինչեւ իր
 վերջին շունչը թրքամուլ թուրք
 է մնացել :
 Այդ մեզ համար նորութիւն
 չէ . կենդանի ժամանակ էլ Աշըգ-
 եանը տաճիկական մի մօլլայից
 չէր տարբերվում հայութեան
 թրքատեաց մասի առաջ :

Այսօր արդէն Աշըգեան սատկել
 գնացել է . բայց իբր թրքական
 հաւատարիմ սարուկ՝ իր մեռնե-
 լուց յետոյ էլ ծառայութիւն է
 մատուցանում Սուլթանի համար-
 անին :

Այո, Աշըգեան սատկել է . և
 ապագայ հայ սերունդը՝ նրա փա-
 ռաւոր հանդէսով թաղած դիա-
 կից մնացած ուղիները կամ շների
 առաջ կը նետէ կամ թէ կը վեր-
 ցընէ որ և է թուրք մօլլայի ոս-
 կորներին հետ կը խառնէ . բայց
 ի՞նչ անենք կենդանի Աշըգեան-
 ներին . ի՞նչ պէտք վարվենք այն
 ցած, սեւահոգի սեւազգեստ-
 ների հետ, որոնք հայ եկեղեցու
 պաշտպանութիւնը են վայելում,
 որոնք, ի մեծ գոբախտութիւն,
 մեր գլուխներն են կազմում—ա-
 ռաջնորդի, քարոզչի, պատ-
 րիարքի ևն. պաշտօններով :

Չէ, հայ ժողովուրդ, բաւա-
 կան է որչափ դիմացար գուք
 ցածահոգի եպիսկոպոսներին ու
 վարդապետներին : Այդ դասա-

կարգը դարերի ընթացքում հա-
 ղիւ մի հինգ վեց հոգի հայրե-
 նասէր անդամ է սուել քեզ :

Իսկ եզրներ, նիկոլներ, Ա-
 շըգեաններ, Խարթոզիմներ,
 Վեստ Սարգիսներ, Օրմանեան-
 ներ և Մամբրէներ բազմաթիւ
 են . ամեն դարի մէջ, ամեն ժա-
 մանակ և ամեն հայկական ան-
 կիւնում : Մեր բռնակալների,
 նրանց գործիք վաշաների, է-
 ֆէնտիներին և աղաների, մեզ
 ճնշելու, խեղդելու և հարստա-
 հարելու համար, ալ բազուկները
 միշտ եղել են այդ ցած արա-
 բածները—և դու դեռ դրանց
 յարգում ես, դեռ դրանց վրա
 յոյս ունես, դեռ դրանցից որեւէ
 օգուտ ես սպասում :

Ժամանակ է մեզ զգաստանա-
 լու . ժամանակ է այդ դասակար-
 գին հասկացնելու աղքեցիկ կեր-
 պով, որ մեր եպիսկոպոսը, վար-
 դապետը, կաթովիկոսը, պատ-
 րիարքը և քահանան նախ քան
 կրօնական լինելը, պարտաւոր են
 հայ լինել բառի ամենալայն նշա-
 նակութեամբ :

Մեզ պէտք չեն դրանց ալե-
 լուները և աղօթքները՝ եթէ
 դրանք չեն հետաքրքրվում մեր
 ցաւերով . ճիզեր չեն թափում,
 զոհողութիւններ չեն անում օգ-
 տակար հանգիստանալու ու այդ-
 ցաւերը մեղմացնելու, բուժելու
 գործին :

Մենք տանջվում ենք այս աշ-
 խարհում . մեզ այս կեանքում
 բարօրութիւն է պէտք . եւ մեզ
 պէտքական են այս աշխարհի
 ցաւերին դարման տանողները,
 բայց ոչ մինչեւ վերջը թուրք
 մնացող հանգերձեալ գեանքի
 շատագոյն սեւազգու խները :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՈՒՄ, 21/1 Յունիլ.
 Տօներով զբաղուած, զլուխս
 սովորականէն քիչ մը աւելի
 խառնուած՝ բաւական ժամանակէ
 ի վեր թերացայ իմ պարտակա-
 նութիւններուս մէջ առ «Շար-
 ժում»-ի ընթերցողները . այսինքն

չի կրցի ժամանակին թղթակ-
 ցութիւն մը գրել :

Եթէ ճշմարտը կողմէք, ա-
 նանկ աչքի դարձող երեւոյթ մը
 ալ չիկար որ իսկոյն, երկու
 ձեռքս կրակի մէջ ալ ըլլար, կեր-
 պով մը հազորդէի :

Աղագային շրջանակները ամբող-
 չապէս մեռած, թմրած, դիակա-
 ցած վիճակ մը ունին . կիլիկիոյ
 կաթովիկոսական անվերջ խեղճիւն
 է որ կը քաշքշուի, առանց վճիռ
 մը ստանալու :

Վերջին օրերս պատրիարքա-
 րանի մտերիմ սեւ երես Քէչեան
 էֆ . . . ի իր «Բիւզանդիոն»-ին
 մէջ հրատարակած էր որ Սոյո մի-
 աբան վարդապետ մը ասկէ կը
 մեկնի Ատանա, ընտրութեանց
 քարտուղարութիւնը վարելու
 պաշտօնով :

Ասոր կըսեն շարժը ուրբա-
 թէն աւելի առաջ եկաւ . Դեռ ևս
 վերջնական համաձայնութիւն
 մը չի կայացուած ընտրութեան
 ձեւին, կառավարութեան միջա-
 մտութեան աստիճանին և պատ-
 րիարքարանի պատասխանատու-
 ութեան շափին վերաբերու-
 թեամբ՝ իսկոյն քարտուղար կը
 զրկուի . . . այն ինչ պաշտօնական
 պատուրիակ Խապայեան դեռ եւս
 երուսաղէմ իր տեղը ամուր նըս-
 տած է :

Ուրեմն այդ լուրը միայն «այ-
 րուած սրտի մխիթարանք է» :

«Պատրիարքը թագաւորին հետ
 միահապպէթը փէք խայնաթմիշ
 ըրեր է» . կըսէր ժողովուրդը յուն-
 վարի սկիզբները . եւ յիրաւի
 Օրմանեան խիստ յաճախ կը վա-
 զէր պաւատ . փիլաֆը բերնին
 համ տուած էր . Գնաց, եկաւ,
 գնաց եկաւ, մենք ալ կարծեցինք
 թէ բան մը պիտի ընէ : Բայց
 յանկարծ սարը մուկ մը աշխարհ
 բերաւ :

Առկախ խիստ գէշ խնդիր մը
 կար—զինուորական տուրքերու
 խնդիրը : Ամէն մարդ գիտէ որ
 Սուլթանի հրամանով շարքեր ե-
 ջան 94—96—97 թիւերուն հայ-
 կական գաւառներու մէջ, իսկ
 շարքերուն յաջորդեց սովը : Ատ
 նեղ ատենները կառավարութիւնը
 չը կրցաւ հարկերէն ամենամեծը

զինուորականը գանձել, ամէն արու անձէ 37 1/2 էն մինչեւ 45 դահեկանն արեկան, եւ առատածեռնորէն նուիրեց ինչպէս յայտնի է, բայց եւր զըջաց ու զայն իբր անհիւր հաշուեց: Ու ահա գեղեցիկ օր մը հայ ժողովուրդը բաւական խոշորկէկ գումար մը պարտք ունեցած եւ զաւ կառավարութեան:

Երբ մեր էֆէնտի ազգայինները իրենց արահուշակ ուղերձը պիտի ներկայացնէին «արեղութ» Սուլթանին, Դուռը կը պնդէր որ անոր մէջը պիտի թէ մեր զինուորական տուրքերու պարտուց փոխարէն պատրաստ ենք զինուոր տալ կառավարութեան, բայց աս կէտը ժողովը չընդունեց և ուղերձի մէջ չի գրուեցաւ: Պարտքի խնդիրը առկալս մնաց: Ատոր համար էր Օրմանեանի յաճախ պալատ երթնելը: Ատ ալ վճռուեցաւ: Պարտքը յետաձգուեցաւ ու պիտի փառատուրապէս բարդուի, հայ ժողովուրդը Սուլթանի յաւիտենական պարտականը պիտի մնայ, ալ երբ ուղէ, զմեզ պիտի սեղմէ և ստակը պահանջէ:

Այսպար, Ալըգեան մեռաւ, նորէն չի խալսեցանք. ասանկ ալ միևնույնէ մարդ կըլլա՞յ:

Մահէն ետքը թուղթեր ու գրութիւններ է թողել. գրուածքներէն մէկուն անունն է «ժողովանակից պատմութիւն»... որ իր պատրիարքութեան օրէն—90 թուականէն մինչեւ իր մահուան

օրը եղած դէպքերը կը պատմէ ու անոնց ամէնուն պատասխանատուութիւնը կը նետէ Իլմիրլեանի ու հայ երիտասարդութեան վրայ:

Արշակ Չօպանեանի արախութիւնը կրնայ մնծ ըլլալ: Ալըգեանի պէս երեւելի համարուած մըն ալ աւելցաւ իրեն ու իր խմբակի ազատամարտ պատմաբան փիլիսոփաներուն:

Ու աս, Բարիլեան առ նորելուկ աղտոտ խմբակի ամենէն մեծ դատապարտութեան գիրը կրնայ սեպուիլ: Դուք էատեցէք:

Կառավարութիւնը Ալըգեանի գանձին լուրը աննուրն պէս, խոկոյն զայն կը յանձնէ Աբրահամ Յարէնկեանի և ժամնիչ Վահան վարդապետի որ կառավարութեան ծախքով զայն տպագրեն: (*)

Եւ ինչո՞ւ չընէ, երբ հայ եպիսկոպոս մը, հայ պատրիարք մը իր աղտոտ գրչով ու բերանով Սուլթանը կարգարացնէ և առարկանոտ ժամանակներու ստեղծի պատասխանատուութիւնը կը նետէ հայերու վրայ... Համիրին ուղածն ալ առ է:

Բարիլեանները, առանց հաս-

(*) Մինք զարմանում ենք թէ թուրք կառավարութիւնը ինչո՞ւ մինչեւ այսօր հազարաւոր օրինակներով չէ արտասպում Չօպանեանի «պատասխանատուութիւններ» եւ առ հասարակ նրա յեղափոխութեան վրա գրած բոլոր քննադատութիւնները, որոնք իրենց ալ ժամանոր սեղը կը բռնէին թուրք մամուլի մէջ:

Ծ. Խ.

կընայու, Համիրին ուղած թելը զարկին, Ալըգեանն ալ անոնց ձայն պահեց ինքնարեւարար:

Աղէկ ճամբայ է բռնածնիդ. շարունակեցէք, թերեւ օր մը մինչեւ Երլարը հասնիք ատ ճամբայով... Ինչպէս Ալըգեան ըրաւ:

Ճամատ Մահմուտ փաշայի օրինակը շատերու վրայ ազդեց. ասկէ 8—10 օր առաջ նորէն Սուլթանի անձնական ետվէրնէն երեքը Երլար պալատին:

Երբ աս լուրերը կառնեմ, բարկութեանս կը ճախրմ. անամթաներ, անզգամներ ո՞ւր կը փախիք, ո՞ւր կը հեռանաք. ինչ կըլլայ որ քիչ մը անձնագոհութիւն ընէք. մէկ անձ մըն է և զուք միշտ զանի կը շրջապատէք...

Այս անգամ ալ Սուլթան Տօլմա Պաղչէէն ծովով գնաց հին պալատը՝ մարգարէի վերադառնալու համբուրելու. նոյն ճամբով ալ վերագարձաւ: Լուրեր պտտեցան թէ երեք անձեր Տօլմա-Պաղչէի քովերը քնասակար նիւթերով միտսին ձերբակալուած են. երեքն ալ թուրք, Սուլթանի դէմ դաւադիրներ: Ստուգութիւնը վկայել չեմ կրնար, որովհետեւ թուրքերէն ատանկ գործ մը սպասելը գլուխ չէ:

Անշուշտ, սպայի մը իտալուհի յափշտակելը իմացած էք: Այդ ինքիբը բաւական տուր կերպարանք առած է: Ասպետ իտալա-

ցիները չեն կրնար հանգուրմել իրենց ազգակցուհու բռնարատումը:

Ռուս կառավարութիւնը Ձինս վիէվի բերանով կը պահանջէ որ թոյլ տրուի Պաթումէն Տրապիզոն, կամ Կարսէն Կարին ու Տրապիզոն երկաթուղի շինել՝ ըսելով որ գերմանացիներուն տուր մինչեւ Պաղատա երկաթուղի շինելու իրաւունքը, մեզի ալ կարին—Տրապիզոն «պիտի տաս»:

Լսած էք որ Ձինսիկէվ զաղթականները իրենց տեղը վերագառնալու արտօնութիւնը և ուսասհայեբու ալ կանոնադր անցագրով ճնշեա մտնելու արգելքները վերցնել պահանջեց:

Կը հասկնա՞ք, հայերը նորէն զէնք մըն են տաճիկը վախցնելու և երկաթուղիի մը շինութեան թոյլտուութիւնը ստանալու համար:

Խեղճ հայ ու հայկական խընդիր. ատեն մը Անգլիային զայն գործիք դարձուց ու կիպրոսը տաճիկէն խլեց... Ե՛հ այսօր ալ թրանսվալի մէջ պատմին կը կրեն... հիմակ ալ Ռուսը զմեզ գործիք է դարձուցեր թուրքէն բան մը խլելու համար:

Թոյլերը միշտ մեղաւոր են զօրաւորներու առաջ և զստապարտուած են միշտ անոնց ձեռքը գործիք ըլլալու, անոնց շահերուն ծառայելու:

ԲԱԺ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԳՈՐՏ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ

1. Ա Տ Ե Ն Ա Պ Ե Տ Ը

(Շար. Ասիտոյ քիւլ. և վեր)

Վերը յիշած հինգ պատգամաւորներուն վրայ արդէն Աղեքսանդրիա գտնուող քանի մը քիզախիտ հերոսներ ալ աւելնալով ընդհանուր ժողովը վաւերական հռչակուած և նիստերն ալ սկսած էին: Հայաստանի, Փոքր-Հայքի, Կիլիկիայի բոլոր նահանգներուն ու արտասահմանի կարեւոր հայ գաղթականութիւններուն ցանկը պատրաստելով բոլորին պատգամաւորութիւնները մէջերինն բաժնած էին, այնպէս որ իւրաքանչիւր ժողովական առգինա մը ձայն ունէր: Աւելորդ է ըսել թէ ժողովին զբաղումներուն մասին խիստ զաղտնապահութիւն մը պատուիրուած էր, այսուհանդերձ ամէն մանրամասնութիւն օրը օրին թարմ, թարմ սրբաբաններու մէջ կիմանայինք: Այսօր զիւանի ընտրութիւն եղեր է, կալակահանը ատենապետ ու Ազգային ատենադպիր ընտրուել են. յաջորդ օրը Ազգիկազմանին ու Փեսայեանին իրարու դէմ ունեցած հակառակութեան դատաւարութիւնը տեղի ու-

նեցեր և փեսայեանը դատաւարտուել է, և այլն: Սակայն միութեան խնդրին մասին զեռ բան մը չէր խօսուէր, միայն թէ զարմանքով կը տեսայինք որ կուսակցութեան օւկաններէն Նոր-Մահը կը շարունակէր իր յարձակումները Դաշնակցութեան դէմ: Այս պարագան միութեան հակամէտութիւն մը չէր կնթաղէր, ուստի օր մը սրճաբանին մէջ հանդիպելով Կակազեանին յայտնեցի կասկածս:

— Իրաւունք ունիք, պատասխանեց, բայց ընդհանուր ժողովը այդ բանը նկատի առնելով, որոշում տուաւ որ ասկէ վերջը, կուսակցութեան օսկաններուն մէջ հրատարակուելիք բոլոր յօդուածները նախապէս կեդրոնին գօնթրօլէն անցնին: Մինչև հիմա գօնթրօլ չկար, Աղիկազեանն ու Չարդումեանը ուղածնին կը զբէին, բայց անհող եղէք ասկէ ետքը ատանկ բան չի պատահիր:

— Բայց կը ներէք պարոն Կակազեան, այդ գօնթրօլը ինծի քիչ մը անկարելի կը թուի, լուրերը որ կեդրոնի նորընտիր անդամներէն մէկն ալ գուք էք, միևնուրն ալ անշուշտ լօնտոն հաստատուած անձնաւորութիւններ չեն արդ՝ յօդուած մը հրատարակուելէ առաջ քանի մը օրինակ ընդօրինակուելով Ամերիկա, Սթէնք և այլն զանազան տեղեր գրուած վարկութեան անդամներուն պիտի զրկուի քննութեան համար:

— Այո՞ իրաւունք ունիք, ասիկա քիչ մը դժուար է, բայց վերջապէս

ժողովը որոշում տուած է, գիտէք որ ամէն բան չեմ կրնար յայտնել, կրկնեց՝ Կակազեան խորհրդաւոր շեղտով մը:

— Բարեկամ, զուք ալ հա՞ գօրը տուել էք գրելու, ըսաւ բարձրաձայն տաք գլուխ երիտասարդ մը, որ քովերինս նստած էր, ինք է ունիք թերթ մը Մարտ է ինչ է, ամէն տարի մարտին կը հրատարակուի, հերիք է. սա Նոր-Մահն ալ դադրեցնէք նէ չըլլա՞ր. յեղափոխական կուսակցութիւն պիտի ըլլաք, բան մըն ալ ըրած չեմ ինք: Թե՞րթ հրատարակելով պիտի ազգը ազատէք:

— Պարոն առ ինչքին վրայ չեմ կրնար ձեզի հետ խօսիլ, ինչու որ ատիկա ընդհանուր ժողովին կը վերաբերի, կրկնեց Կակազեան նոյն խորհրդաւոր ձեռով, բայց կարծեմ որ Նոր Մահն ալ անօգուտ թերթ մը չէ, չէ՞ք օգտուի կարգալով:

— Չեմ կարողոր որ, պատասխանեց երիտասարդը աւելի գրգռուած, մեղք չէ այքերուս. ի՞նչ կայ որ մէջը, հազար անգամ լսած քարոզիս կը տաքցնեն կը տաքցնեն նորէն առջեւնիս կը բերեն. օր մը վարդապետներն պոչէն կը խածնեն, օր մը Չարքէոսին կը հաչեն, իրենց այքերուն գերանը չեն ստանար ուրիշներուն չեօփը հանելու ելեր են:

— Հոգ մի՛ ընէք, հոգ մի՛ ընէք սղաք, ատոնք բոլորը կը վերնան կամաց կամաց, մէջ մտաւ, մտալաճառի կերպարանքով յաղթանդամ ջղվերակազմեալ մը, որ քով սե-

ղանին վրայ մէկու մը հետ թափել կը խաղար. աճապարելու չի գար, կամաց կամաց, աս տեսակ գործերու մէջ աճապարելու արդիւնքը աղէկ չըլլար, մենք անգամ մը փորձեցինք տեսնել:

Այս խօսակցութենէն հաղիւ շաբաթ մը անցած՝ Նոր-Մահի յաջորդ թիւը կը հասնէր, ուր «յեղափոխութեան մակարոյճները» վերնագրին տակ Դաշնակցական գործիչ մը կը ծաղրուէր Կակազեան խեղանումով: Աղեքսանդրիայի մէջ, ուր Պապատեանը լաւ ճանչցուած էր, ընդհանուր զըզուանք մը յառաջ բերաւ այդ յօդուածը: Բարեբաղդաբար Նոյն օրն իսկ երբ ճաշարանի մէջ Նոր Մահին այդ թիւը աչքէ կանցընէի, Կակազեանը յանկաթ չեռա մտաւ, բարեւելով քովս նստաւ և իր յաւիտենական պիֆթէկը ապարկելէ ետքը ինծի դառնալով.

— Նոր Մահ կը կարգաք.

— Այո՞, պարոն Կակազեան, ձեր քօնթրօլին հրաշալի արդիւնքին կը հիանամ, կարծեմ այս թիւը քօնթրօլէ անցած է, այնպէս չէ՞:

— Ստանիկ ըլլալու է, ի՞նչ կայ որ Թօղուածը բանալով առջեւը գրի:

— Այո՞, կարգաքի բայց ասիկա վէպ է:

— Ի՞նչպէս թէ վէպ է, գոչեցի չի կրնալով զարմանաք զայել. եթէ վէպ է վրան պէտք էր «վէպ» գրել և ոչ թէ «Յեղափոխութեան մակարոյճները», մանաւանդ որ որոշ կերպով կը հակակցուի որու ակնարկուած ը-

ձրՁի, 30 Դեկտ.

Ծննդեան առթիւ վեր ելայ Ուէսթ Զօպօքընի բարձունքը, բոլոր բարեկամներուս այցելեցի, և երկու խիստ հետաքրքրաշարժ մակեր իմացայ, որք մեծ ու պզտիկ կը գործածէին անխնայ, «անզգալի Դաշնակցականներ» ու «անհաւատներ»:

Մեծ եղաւ զարմանքս երբ առաջին անգամ լսեցի այդ խօսքերը. ջանացի մանրամասնութեանց տեղեկանալ, զատ զատ ազգաբնակիչ և աւելորդ չեմ համարեր «Մարտի» ընթացողներուն ալ հասկցնել խնդիրը, բայց զնահատելու պայմանաւ:

Ահա համառօտութիւնը:

Տարիուկէս առաջ Ուէսթ Զօպօքընի մէջ լսարան կամ ընթերցարան անուններն անգամ չկային. նորեկ երիտասարդներ հետզհետէ միանալով կորոչն Ազգային ոգին վառ պահելու համար ունենալ ազգային լսարան մը, որ շատ մը սեակէտով հայ գաղութին օգտակար ըլլալը անուրանալի է: Կը յաջողին բանալու լսարանը ու քայլ առ քայլ կը յառաջդրուին:

Ներկայիս Ուէսթ Զօպօքընի հայը կրնայ պարծենալ իր լսարանով. չարազանցած չեմ ըլլար եթէ ըսեմ, շրջականերէն և նոյնիսկ Նիւ-Եօրքի լսարանէն ալ առաջ անցած է. սոյն ճշմարտութիւնը կը խոստովանին տեղւոյս Նիւ-Եօրքի անկեղծ ազգայիններն եւս:

Ահա այն երիտասարդները, որոնք ազգօգուտ լսարանը իր

ճշդութեանը մէջ պահպանելու ամէն ջանք ու զոհողութիւն չեն խնայիր, կը կոչուին, «անզգալի դաշնակցականներ»:

Երկրորդ, եկեղեցի և դպրոց, երկու խիստ կարեւոր և վիճաբանութեան արժանի նիւթեր. «մանակ մը շատ ծեծուեցան, ո՞րը առաջ, աւելի զգալի պէտք է ու զայն յառաջ մղելն է հարկաւոր»:

Երբ երիտասարդներու խումբ մը դպրոցը նախընտրեց, կրօնամոլներու և կէս կուսակցականներու (նոր. Հնչակ ու Արմենականներ) բանակ մը սկսան աղաղակել — հա՛, «դաշնակցականներ», դաշնակցականներ», զըզրոց կուգեն, «անհաւատներ» են անոնք անհաւատներ», եկեղեցի չեն սիրեր, և այլն:

Երրորդ, լսարանասէր և զըզրոցասէր երիտասարդներու խումբը, վերջերս մտաւորական զարգացման համար ալ միջոց մը կը խորհի՝ միութիւն մը կը կազմեն, յառաջդիմական անունով, ազգային գլխաւոր բոլոր թերթերուն կը բաժանորդագրուին. կը բանան ընթերցարան մը, տղատութիւն կուտան տեղի փափաքող հայերուն ձրի կարգալ զանոնք: Յետոյ մտաւորականին կը կցեն Փիլիթական զարգացում մըն ալ ու կը հրաւիրեն սիրողները միանալ իրենց: Վերեւ յիշածս բանակը դարձեալ կաղաղակէ «դաշնակցականները, անհաւատները»:

Չորրորդ, զարգացեալ երիտասարդներէն քանինեք, զործի

անյաջողութեան պատճառաւ, վերջապէս կը հաստատուին ի Բաթըրըն, կամայ ակամայ հոն մնալ կը ստիպուին, թէեւ զուրկ լսարանէ, զուրկ ընթերցարանէ և զուրկ մտաւորական զարգացման որ և է միջոցներէ: Չըմուռնամ յիշել Բաթըրընի «գաղութականական միութիւնը» որն արդարեւ ունի լսարան մը, սակայն հոն «եսականութեան» միապետները կը թագաւորեն և աւելութեան ու նախանձի կուտարար զինուորներ կը պատրաստուին: Կը կուտին լաւին ու բարիին դէմ, խառնել, աւել կը ջանան, սակայն անյաջողութեան կը բաղխին միշտ:

Ուէսթ Զօպօքընէն ակամայ հեռացող յառաջդիմասէր երիտասարդները կը ջանան մաքրել ապականութիւնները, լսարանը հայ գաղութին օգտակար ըլլալու պէտք եղած միջոցներուն ձեռնամուխ ըլլալով: Սակայն այս բանը հակառակ ըլլալով յատուկ խմբի մը, կը փութան կերպով մը դուրս ձգել զանոնք: Վերջինները դիտելով իրենց բոլոր ջանքերուն ապարդիւն մնալը, նախամեծար կը համարեն իրենք առաջ անցնելով հիմնել լսարան մը ու ընթերցարան մը նաեւ: Որոշումը իրականացնելու համար ուրիշ քանի մը բազմաթիւ անհաւատներու և ուսանելիներու հետ ձեռք ձեռքի տալով, «Ընթերցարանի միութիւն» մը կը կազմեն, և շուտով կը բանան լսարան ու ընթերցարան մը: Ընթերցարանին մէջ կարող անձ-

նաւորութիւններ կը դասախօսեն, ուսանողներուն դասերը ձրի կաւանդուին, շարժուան երեք գիշերները յատկացուած են անոնց:

Լսարանի օգուտներուն վրայ չի պիտի ծանրանամ. անոր վրայ գաղափար մը ունենալ փափաքողները թող հաճին «Մարտի» 179 թիւ Վ. Մ. Չ, ստորագրութեամբ սգահանդէսի մը նկարագրութիւնը կարգալ, ուր պարունը անոր օգտակարութեան մէկ նմոյշը գրած ու «հրաշք» անուանած էր զայն:

Չերկարացնեմ խօսքս, լսարանի վարչութիւնը յատուկէն կը հրաւիրէ ծանօթ ատենախօս Տ. Թ. Չարչաֆճեան խօսելու, յիշեալը չի մերժելով վարչութեան հրաւերը յանձն կանուտ երթալ ու խօսիլ «երիտասարդութեան պարտանուկութեան» վրայ:

Մէկ կողմէն Նիւ-Եօրքի «չինչ կոն», «պատակաւոր» կանուանէ խօսողը, միւս կողմէն, Բաթըրընի, բառի բուն նշանակութեամբ «խառնակիչ» դատակարգ մը լսարանասէրները դաշնակցականներ կանուանեն, խոչնդոտներ յարուցանելէ երբէք չեն դադարիր. սակայն յառաջդիմութեան անջախախտ անխնայութեան տակ կը փշրուին ու կը հարթուին անոնք:

Կը փափաքէի այդ դաշնակցականներու «անզգալի»ութիւնն ալ քիչ մը լուսաբանել: Ես տակաւին Ուէսթ Զօպօքընի, Բաթըրընի մէջ անոնց կարծած Դաշնակցականներու գոյութիւնը լսած

լալը, Դաշնակցական գործիչ Պապուեանն է, որ ատեն մը հոս եղած է:

— Ստիկա ուրիշ խնդիր, կրնայ ըլլալ որ ատանկ է, բայց անգամ մը հարցնելու եմ. մինակ թէ այդ Դաշնակցականներն անունը, ինչպէս կը սէք Պապուեան եղած է, մինչդեռ հոս կականեան է գրած. ասոր կարեւորութիւն տալու չէ, ինչու որ ժողովուրդը խնդրանքու, միութեանը համար գրուած է:

Ալ հասկցայ թէ որու հետ գործ ունէի, ու խօսակցութեան նիւթը փոխեցի: Կակազեան ճաշը վերջացնելէ ետքը, շատ մեծ պաշտօնի մը գլուխ ըլլալու յաւակնութիւնը ունեցող պզտիկ մարդու մը ծիծաղաշարժ հպարտ ձեւերով սկսաւ հրահանգներ տալ ճաշարանի տիրոջ, իր հարաբերն ու սպասաւորներուն, որոնք բոլորն ալ Սընթանդերիոյ մասնաճիւղին անգամ էին:

— Պարոն Խաչօ՛, ժամը չորսին քովս գալու էք, այն կարեւոր նամակը պիտի գրուի:

— Պարոն Կիսակ այսօր չմտնաք երէկուան ըսած մարդուս քով հանդիպելու:

— Պարոն Մկրտիչ դուն ալ պէտք է իրիկուան քովս գաս, որ ան գիտցած թուղթերը ընդօրինակես:

— Ես ալ գամ պարոն կակազեան, ըսաւ ծիծաղելով, յեղափոխական Փեւտեանը, որ քանի մը հողիի հետ ունէինս խմելու ծրագիր մը մշակելու վրայ էր:

— Ոչ, չնորհակալ եմ, դուք գիտի

խմելու գացէք, պատասխանեց Կակազեան, վերաւորանքը ծածկելու ճիգով մը:

Այս միջոցին յանկարծ նախկին Հնչակեան ընկերս ներս մտաւ. հագիւ թէ բարեւած էր, Կակազեան ըսաւ:

— Պարոն Մարտիրոս կուգէի ձեզի հետ քիչ մը տեսակցիլ, ե՞րբ ժամանակ կուենանք:

— Երբ որ կուգէք:

— Հիմա, եթէ ազատ էք, ևս ձեզի փրամիտի սթմարանը կը սպասեմ, ճաշելէ ետքը հոն եկէք:

Կակազեան մեկնեցաւ, ընկերս ճաշելէ ետքը միասին դուրս ելանք. ան իր ժամագրովայրը գնաց, իսկ ևս ալ իր փրամիտի պարտէզը տեսակցութեան վախճանին սպասելու:

Անցաւ երկու ժամ բայց ընկերս դեռ չերեցաւ. ստիպուեցայ փրամիտ երթալ: Ենկերս մը նստած՝ դեռ կը շարունակէին իրենց խօսակցութիւնը, որ ինչպէս կերեւնար տաք կերպարանք մը ատած էր. ընկերս գրգռուած կը խօսէր, իսկ Կակազեան ախորժակով վրայ անհանգիստ շարժումներով մտիկ կընէր:

— Ոչ կը միանք պարոն Մարտիրոս, ընդամիջեցի ևս, պարոն Կակազեանը դեռ հոս կը մնայ, ուրիշ անգամ ալ կրնաք տեսակցիլ:

— Խնդրեմ նստէ՛ քիչ մը, հիմա կը վերջացնենք, պատասխանեց ընկերս, բայց Կակազեան անմիջապէս ժամացոյցը հանելով:

— Արդէն ես ալ տեղ մը ունիմ

երթալիք, ըսաւ ու հրաժեշտ առնելով մեկնեցաւ:

Հասկցայ որ վրայ հասնելով մեծ նեղութեան մը ազատած էի խեղճ մարդը, քրտինքը թուի զէմքը ծածկած էր, ձայնը ալ ամբողջովին քիչն կելլար:

— Վա՛յ ողորմելի մարդ վա՛յ, բացազանչեց ընկերս, զխու ճոճումներու ընկերացած կարեկցական ակնարկ մը նեխելով Կակազեանի ետեւէն, որ արտաքաջալ կը հեռանար, մեծ վտանգէ մը մազապոր սողատած մէկու մը շուտութեամբ:

Ճամբան ընկերս հաղորդեց ինձի իրենց սեսակցութիւնը, զոր համառօտակի կամփոփեմ հոս:

Կակազեան առաջարկած էր իրեն կրկին Մայր-կուսակցութեան գիրկը վերադառնալով անոր գրօշին տակ զործիլ, աշխատելով համազել զինքը որ ժամանակին իրենց բաժանումին պատճառ եղող նազարեկեաններու արտաքուստով վերակազմեալ կուսակցութիւնը գտուած է: Ընկերս ի պատասխանի յիշեցնելով Պիթճեան պատուելիին զազրագործութիւններէն ու Մուրա-Շիրվանի սպանութենէն մինչև վերջին մերկացումները՝ այն բոլոր զէպքերը, որոնց պատասխանատուները վերակազմեալին սխնեքն են այսօր, հասկցուցած էր Ամերիկայի պատգամաւորին, որ ամէն յանցանք նազարեկեան վրայ բարդելով կուսակցութիւնը աւելուած ու մաքրուած ներկայացնելը՝ կրնայ լոր Մանի սթամանակակից պատմու-

թեան էջերուն մէջ գրուելով անգարմանելի միամիտները կամ ապուշները միայն համոզել: Որու վրայ խեղճ ատենապետը արգարացումի քանի մը ծիծաղելի փորձերէ ետքը վերջապէս ճարահատ գիտած էր գարձեալ իր Մեծ-Կաղանապատի խորհրդաւոր ակնարկութիւններուն:

— Այդ խնդիրները փակեմք, պարոն Մարտիրոս, ատոնք կամաց կամաց կը շտկուին, ընդհանուր ժողովը սիջողները խորհեցաւ, հիմա ամէն բան չեմ կրնար ձեզի հաղորդել, կուսակցութիւնս դեռ նոր վերակազմուած է, եթէ քիչ մը ներդրամութիւն չունենաք մարդ չմտար մեր մէջ: Հիմա ես կը փափաքեմ հասկնալ թէ չէք ուզեր կրկին մեզի հետ գործել: Դաշնակցականներուն անխոհեմ գործունէութիւնը կը տեսնաս որ ազգը օրէ օր կը կործանէ, տե՛ս, այս օրեր զինակիր խումբ մը նորէն կուտի էրոնուեր քրդերուն հետ. իրենց երեսէն քանի մը հայ գիւղեր քանդուեր են, ասիկա աղէկ ընթացք է:

— Ի՞նչ, միթէ քրդերը հայ գիւղեր կը քանդեն ըսելով յեղափոխականները պէտք չէ՞ գործեն:

— Ո՛չ, ես ատանկ ըսել չեմ ուզեր, հա՛րկաւ պիտի գործեն, բայց երկիր զէնք մտցնել ի՞նչ պէտք է:

— Ի՞նչ կըսէ՞ք Պ. Կակազեան, առանց զէնքի յեղափոխութիւն կըլլայ:

— Աղէկ, բայց մենք կրնանք զէնքով Օսմանեան կայսրութեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

չունիմ, այդ մասին դիտարկութիւնները բրած եմ, փաստեր կան...

Տ. Պ. Չ. իր ազգասիրութեան և անկեղծութեան համար կը սիրուի կարգ մը երիտասարդներէ...

Արդ՝ ազնիւ ընթերցող, դուն ալ քննէ, զպրոջ կը սիրե՞ս, եթէ այդ ուրեմն «Գաղափարներ»...

Պատիկ հարցումով մը վերջ պիտի տամ գրութեանս, ընթերցող, մաճեցով գնահատէ, «անզգալի»...

Իմ որոշումն է՝ զգնել անոնց բարոյագէտ և նվթապէս, ձեռք կառկառել, միանալ ու դործել...

Գու ալ այնպէս չե՞ս խորհիր: ԾԻԼ ՌՇՏՈՒՆԻ

դիմացիբը, մանաւանդ որ Հայաստանի ժողովուրդը զէնք չուզեր:

— Բայց ո՞ւրիկէ առած էք այդ անզգեկութիւնը, եթէ ժողովուրդը զէնք չուզեր, հապա որո՞նք են փոխադրողները:

— Ասանք ժընկղջիներու մարդիկ են, ևս Ամերիկա իմացած եմ ժողովուրդը զէնքի հակառակ է, նոյն իսկ Ամերիկեան թերթերն ալ գրեցին:

— Շատ կը ցաւիմ բարեկամ, որ առանց երկրին ժողովուրդին տրամադրութեան ներքին անգեղակ ըլլալու, ասկէ անկէ ստած սխալ անգեղութիւններու վրայ պատգամներ կարծակէք: Դուք 15 տարի է որ երկրէն ելած էք եւ ձեր ընդհանուր ժողովին մէջ չկայ մէկը, որ երկրէն գոնէ երկու տարի առաջ ելած ըլլայ, բայց ես դեռ երկու ամիս առաջ եկած եմ երկրէն. ժողովուրդը ոչ միայն զէնքի հակառակ չէ այլ մինչև իսկ կը պահանջէ, նազարէկը դատաւարանից քերական զէնք չի հասցնելուն համար, իսկ այսօր դուք կը հակառակիք այդ գործին: Երբեք ի՞նչ բանի կը ծախուք ձեր հաւաքած գրամիտը: Ենթացրենք թէ ես այսօր ձեզի միացայ, խնդրեմ բացատրեցէք ինձի, ի՞նչ պիտի ըլլայ մեր ընկիւնը:

— Աստիկա չեմ կրնար հիմա ձեզի ըսել, ինչու որ ընդհանուր ժողովին գաղափարն է, բայց մենք աւելի օգտակար բաներու կը գործածենք մեր գրամը. զորովինակ Ձէյթունի եւ ու-

Յունիստ 1916 Պօլսէն կը հեռագրեն թէ՛ նախարարական խորհուրդը 18ին յայտարարած է իտալական զեկայանառուը որ Բ. Գուրը յաջողակաւ իտալական Սիւլիան մանկահաս զանկով որոշած է յանձնել իր հօրը: Եւ արդէն աչիկը յանձնուած է հօրը իտալական թարգմանիչներ կայութեամբ:

— Աթիւնայի մէջ Սօլունէն իմացած են որ թուրք կառավարութիւնը յոյներու դրդամբ ձերբակալեր է 22 պուլկար Մակեդոնիայ զանազան կողմերը, որոնք կը մեղադրուին քանի մը յոյն սպաննելու մէջ:

— Թրանսվալէն 18 էն եկած հեռագիր մը կը հարցոյց է.

Փէնէրալ Պիւլլէր ճառ մը արտասանած է իր զօրքերուն, որու մէջ յայտնած է թէ յոյս ունի շարժուան մէջ Լէտամիտ մտնալ: Գանի մը տեղացիներ կը հաւատացնեն թէ Թրանսվալիներու մէնէրալ փուպէր սպաննուած է Լէտամիտէն նետուած ռումբով մը:

— Իրիպէի մէջ Հոռովէական յաղթական կառք մը գտնուած է որ Բրիտանական չորս զար առաջ շինուած կը կարծուի: Կառքը գտնուած է հին զեւեղմանատան մը մէջ, քաղաքին հարաւ արեւմտեան կողմը:

Կառքի բոլոր պարագաները բրօնզեա են և փոքրիկ նկարներով: Գտնուած է նաեւ ձիու

ուրիշ տեղերու կարօտանքներուն կը նպաստենք...

— Ինչո՞րեմ, անամէջ գաղտնապահութիւններով իրար չի խաբենք, լաւ գիտեմ որ մինչև հիմա տեղ մը սանթրիմ մը չէք զրկած կուսակցութեան դրամէն, որ ամբողջովին Ազգիականի ամառանոցին ու ձմեռանոցին ծախքերուն ու քանի մը պորտաբոյժներու ապրուստին կը սպասի: Բայց ենթադրենք թէ ձեր ըսածը ըլլայ, ասիկա թէեւ շատ գովելի տակայն յեղափոխական կուսակցութեան մը գործը չէ, եթէ առ է ձեր ամբողջ գործունէութիւնը արեւմտաբարձակապէս իրաւունք չունիք յեղափոխական կուսակցութիւն կոչելու ինքզինքնիդ, այլ պարզապէս Ազգատարնամ Լինկերութիւն:

— Ո՛չ, ո՛չ, մենք ուրիշ գործեր ալ կընենք. բայց չեմ կրնար ձեզի յայտնել, միայն սաչափ ըսեմ, որ մենք ապստամբութիւն ընելէ առաջ զուրք մեծ ոյժ մը կազմելու կաշխատինք, անշուշտ մեր թերթերուն մէջ կարգադրած ըլլալու էք որ հանձարեղ ու հարուստ շատ մը անձեր հաւաքուած են մեր կեդրոնին շուրջը. ընդհանուր ժողովին մէջ միջոցներ խորհեցանք մինչև իսկ թագաւորներ մեզի միացնելու. անանկ որ որ մը առանց հայու մը քիթը արիւնելու ազգը պիտի աչառենք...

Գանի մը օր ետքը իմացանք որ ընդհանուր ժողովը վերջանալով կազմուած Գանիիցէ գացած է, հայ փաշտներուն ու պէյրերուն հետ տեսակ-

սարք, հինգ մարդկային զանկ և քանի մը սուր և նիզակ:

Կառքը և անոր հետ գտնուած ամէն իրերը միասին գրուած են Ֆրիպէի թանգարանը:

— Լուր կը պարտի թէ իշխան Ֆէրիտանտ և նախարարները լուրջ կերպով կը մտածեն Պոլկարիան թագաւորութիւն հրատարակել, Գրանկֆօրթ Ֆայթունկ կըսէ թէ՛ Ռուսիա չը պիտի հակառակի այդ բանին, և մեծ պետութիւններն ալ պիտի հաշտուին կատարուած իրողութեան մը հետ:

— Աթէնքէն կը հարգողքեն թէ՛ յունաց կառավարութիւնը մտադիր է սպառնալու պետ կորդել զերման ժէնէրալ մը և այդ մասին արդէն բանակցութիւններ սկսուած են Պէրլինի և Աթէնքի մէջ:

— Զուրցերիոյ կառավարութիւնը որոշած է երկրէն արտաքսել երկու օտարականներ, որոնք անիշխանական կը համարուին: Որոշած է նոյնպէս ընկերակարական և անիշխանական Ալմանախ թերթը գաղղեցնել, որով կը գրգռեն ժողովուրդը անկարգութիւններ ընել:

ԸՆԴՐԱԲԱՅ ԵՐԿՐԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՍՏ ՀԱՍՈՒՍՆՈՅ

Հին և նոր Ազգ. երգերու գին 2 Ֆր. սոյն երգարանը կը ծախուի վառնա, Ա. Զարգանդիկանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ գործողական և վիպական գրքեր, գրամի փոխարէն կընդունի նաեւ նամակագրոյմ: Կնուս և վաճառու ամէն տեսակ գործածուած նամակագրոյմ երու:

ցելու, բայց տեսնալով որ անոնց ներկայանալը քիչ մը դժուար է սկսած էր ամէն դիմացը ելլողին հնչականութիւն անաշարակել, ճիշդ ինչպէս սաճիկները պարտք կը համարին իրենց ամէն ծանօթին Մահմադականութիւն հրամանի սակայն արդիւնք հոն ալ սրճարանի անգործներուն ժամանցի ինքնատիպ նիւթեր հայթաթելէն անցին չէր անցած: Ազգային փրկութեան կեդրոնին թագաւորներու աջակցութիւնը ապահովելու գաղտնիքն ալ չուշացաւ պարզուելու: Ընդհանուր ժողովի փակումէն քիչ մը ետքը հարուստ վերակազմակալ մը, որու մէկ ազգականը կըսուէր թէ մատակարարն է Հապէշիստանի թագաւորին՝ ընտանիքով Հապէշիստան կը մեկնէր «Մեներիք կայսրը հնչակեան շինելու»: Տարիէ մը ի վեր հոն է այդ արտաքս կարգի պատգամաւորը եւ անշուշտ հետո չէ այն երջանիկ օրը, երբ հապէշ բանակի մը արշաւանքը պիտի տեսնենք զէպ ի... զէպ ի... ըսեմ երթալ, զէպ ի Կիլիկիա:

Ուրբաթ օր մըն ալ յանկարծ շուկան հանդիպեցայ Կակուղեանին, ձեռքը թուղթի խոշոր ծրար մը, որու բացուածքէն խոշոր ձիթապտուղներու հատեր կերեւնային, և-

ԳԱՐԵՋՐԱՏՈՒՆ ՍԱՆԹՐԱԼ

Տ. ԹԻԻՅԵՆԿՆԵԱՆԻ

Մուսաղլաի Թաղապետական պարտիզի ղեկավար, Անիկի Անիկի Սլաւօֆր

Պատիւ ունիմ ծանուցանելու Արգոյ հասարակութեան թէ՛ այս անգամ մեծ աւ պատրաստութեամբ բացած եմ սոյն գործը յարատունը, յուսով եմ թէ չը պիտի զլանայ պատուարժան հասարակութիւնը զիս քաջալերել:

Յ. ՃԱՆԿԻԿԵԱՆ
ՆՈՐ ԲԱՆՈՒԱՅ
ԾԽԱՎԱԶԱՌԱՆՈՅ
Թիւ 389 Իսկիզի-պուշի

Կը վաճառուի ծրարտու, բոթալի եւ աղբրագրի ամէն տեսակ բույր նաեւ զանազան տեսակ սիկարներ: Թէ թուականին հրատարակելու Պուլկարիոյ զահագառանգ Պօրիսի պատկերազարդ քառթ-փոթալներ, որ այժմ չեն գործածուիր: Նոյնպէս եւ կը վաճառուի «Ծարժուս»:

Շարժուել կը ծախուի նաեւ նամակատան գրամաց նոր բացուած փոքրիկ գրատունը:

ԽՊԲԱԳՐՈՒԹԻՒՆԻ ԿՆՍՏԱՆՍՊՈԼԻՍ

Կը սպաղարուին ամէն լեզուէ այցեւորուն, հասցեւորուն, նամակագրուին, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ, ինչպէս նաեւ պրօշիւններ:

Գիները յոյժ դիւրամտաշելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՆԵՐԸ ԿՆՆԻՍԻԿ
Սեպտեմբր 24, «Взавимостъ» Вара:

24 Դեկտ. 1899